ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

ՊՐ. ՔՐԱՖԹ ՊՕՆԱՐ

Մանօթ հայաբեր Զուիցերիայի Պր. Քրաֆթ Պօնար Երուսաղէմ ժամանեց Նոյեմբեր 18, Բշ.։ Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ, կայարանին մէջ ողջունուեցաւ Հոգ.։ Տ. Կիւրեղ Վրդ. Խաչիկեանի և Քարտուղար Տիար Կարապետ Հինդլեանի կողմէ և առաջնորդուեցաւ Հօրեղ Ալենպի, իբրև հիւրը Պատրիարքարանիս։ Պր. Ք. Պօնար նոյն օրը ժամը 11ին այցելեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր, որմէ յետոյ, իրեն հիւրամիջոց կարգուած Տիար Կ. Հինդլեանի առաջնորդութեամբ այցելեց Ս. Յակոբեանց Մայր Տաճարը, Ժառանգաւորաց Վարժարանը, Նորաշէն Դպրոցը և Սուրբ Տեղեր։

Երիքշաբթի երեկոյեան ժամը 5ին, ի պատիւ յարգելի հիւրին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը թէյասեղան մը տուաւ Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ, որուն ներկայ գտնուեցան Գիրք. Տ. Տ. Մեսրոպ, Մկրտիչ, Բաղդէն և Մատթէոս Սրբազանները, Հոգ.։ Տ. Տ. Տրդատ և Կիւրեղ Վարդապետները, Դիւանապետ Տիար Կ. Նուրեան, Ամերիկայի Մր. Պէնիֆարտ և տեղւոյն ազգայիններէն Տէր և Տիկին Տքթ. Վահան Գալպիեան և Տիար Լեոն Գէորգեան։ Պր. Պօնար թէյասեղանի ընթացքին ընդարձակ տեղեկութիւն տուաւ իր Պընիէնի և ժընէվի մէջ հաստատած Հայ Տան վրայ, և իր հիացումը յայտնեց Սուրբ Տեղերու մէջ Հայ Ազգին գրաւած բարձր դիրքին և վայելած վարկին համար, և շնորհակալ եղաւ Ս. Պատրիարք Հօր, իրեն եղած ասպնջականութեան համար Երուսաղէմի մէջ։

(«Սիոն», 1929, Դ. Տարի, Հոկտ.–Դեկտ., Թիւ 10–12, էջ 405 եւ 406։)

քարոզխօսութենէն) անմիջապէս յետոյ, մինչ Օրթոտոքսներ՝ ուելի ուշ, Սրբատաղութենէ քիչ առաջ։

Ցունադաւանները ունին տակաւին մեծ ոստներու նախատոնակներէն եռաբ հացի օրհնութեան արարողութիւն, ուր կ'օրհնուին հինգ նկանակներ, ի յիշատակ հացերու բազմացման հրաշքին։ Ինչպէս նաև փասկալ–խաչանի դրութիւնը, ուր պատարագիչը, խաչկալով մը գրաւուած տաճարի ներքնամասին մէջ և հաւատացեալներու տեսողութենէն հեռու, ծածկաբար կը մատուցանէ իր պատարագը «ծածկագիտին Աստուծոյ», Հին Ուխտի մէջ յիշուած «Սրբութիւն Սրբոցի» օրինակով։ Այս դրութիւնն կը հեռանին նաև Յոյն–Կաթոլիկներ և Ղպտիներ, հակառակ որ Ղպտի Եկեղեցին, մերինին նման, մաս կը կազմէ Միաբնակ Եկեղեցիներու ընտանիքին։

Մենք և Յոյնք ունինք նախատոնակ կատարելու և խաղող օրհնելու սովորութիւն։ Նաև «Զրօրհնէքը» կը կատարենք Աստուածայայտնութեան տօնին, մինչ Լատիններ նման արարողութիւն մը կը կատարեն Ս. Զատկի գիշերը, «Լուսաւորեալներ»ի պարզ արարողութեան յաջորդող Ճրագալոյցի Պատարագի ընթացքին։

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ ՄԸ Ս. ՅԱԿՈԲԻՆ

Հալէպէն Արժ. Տ. Ներսէս և Տ. Գաբրիէլ Քահանայ Հայրեր, որ 1928ին Երուսաղէմ եկած էին ուխտի, և միանգամայն իրենց գաւակներուն քահանայական ձեռնադրութեան և օծման հանդէսին ներկայ գտնուելու համար, փափաքած էին յիշատակ մը ունենալ ի Սուրբ Յակոբ։

Անոնք Հալէպի մէջ ծանօթ արուեստագէտ Անթէպցի Գալէմքարեան եղբարց չինել տուած են զոյգ մը արծաթ քշոց, ճաճանչաւոր։ Արուեստի գեղեցիկ արտադրութիւններ են այս քշոցները։ Երկուքին ալ բուներուն վրայ փորագրուած է հետեւեալ յիշատակարանը.

«Քշոցս կը նուիրեն Ներսէս Քհնյ. Թավուգճեան եւ Գարեգին Քհնյ. Զօղարեան Ս. Յակոբայ Վանքին, ի յիշատակ իրենց որդւոց՝ Տիրան եւ՝ Նոխայր աբեղաներուն քահանայական օծման. 1928»։

(«Սիոն», 1929, Դ. Տարի, Հոկտ.–Դեկտ., Թիւ 10–12, էջ 407։)

digitised by A.R.A.R.@